ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱԳՈՒՍՏԻ ԴԻԶԱՅՆ ԵՎ ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ

Հագուստի դիզայնի մասին խոսելիս մենք առաջին հերթին նկատի ենք ունենում նորաձևության ստեղծումը: Դիզայներական գործունեության առանձնահատկությունն է դրա նորամուծական բնույթը: Նախագծվում են հագուստի առարկաների նոր գործառույթներ և որակներ, նոր ձևեր՝ պայմանավորված հասարակության փոփոխվող պահանջմունքներով, նորաձևությամբ, նոր նյութերի ու տեխնոլոգիաների ի հայտ գալով: Դիզայները ձևավորում է հասարակական նոր պահանջմունքներ, ստեղծում նոր իրավիճակներ սպառողական նախասիրությունների դրսևորման համար, կերպափոխում և կատարելագործում է հագուստի նախագծման և արտադրության գործընթացները՝ ներդնելով նոր գաղափարներ: Հագուստի դիզայների ստեղծագործական գործունեությունը սերտ կապված է նորաձևության, այսինքն՝ հասարակության մեջ ժամանակի տվյալ հատվածում հագուստի, կենցաղային առարկաների, ավանդույթների նկատմամբ տիրապետող գեղագիտական նախասիրությունների հետ: Հագուստի դիզայները պետք է ոչ միայն կարողանա աշխատել ժամանակակից նորաձևության շրջանակներում, այլև զգա դրա հեռանկարային զարգացման ուղղությունները և կանխատեսի նորաձևության միտումները: Նորաձևությունը մի քանի ընդհանուր սկզբունքով և բազային ձևերով միավորված վարքագծի, նախապատվելի համակցությունների, կրելու եղանակների և այլնի յուրօրինակ կանոնների «ժողովածու» է, որի գործողությունը սահմանափակված է փոքր ժամանակահատվածով: Լայն իմաստով՝ նորաձևությունն ընկալվում է որպես որոշակի ժամանակահատվածում և որոշակի միջավայրում մշակույթի տարբեր արտաքին դրսևորումների (կյանքի ոճ, ավանդույթներ, վարքագծի սովորույթներ, կենցաղի առարկաներ, հագուստ) նկատմամբ որոշակիորեն ձևավորված ճաշակի տիրապետություն: Նորաձևությունը ոչ միայն հագուստի, այլ նաև ողջ հասարակության շարունակական զարգացման կարևորագույն գործոն է: Այն գեղագիտական երևույթ է, որն առաջին հերթին կապված է արվեստի ոլորտում գեղագիտական իդեալի ու ճաշակի փոփոխման հետ: Հագուստի դիզայնը մշակույթի ոլորտ է, որում ակտիվորեն գործում են նորաձևության մեխանիզմները: Նորաձևությունը, որպես սոցիալ-մշակութային բացառիկություն, կատարում է որոշակի մշակութային և սոցիալական գործառույթներ:

1. Մշակութային նմուշներում միատեսակության և բազմատեսակության ստեղծման և պահպանման գործառույթ: Միատեսակությունն ի հայտ է գալիս, եթե նորաձևության շնորհիվ միևնույն նմուշը յուրացվում է որպես սեփական բազմաթիվ անհատների, սոցիալական խմբերի և հասարակության կողմից:

2. Նորամուծական (նորարարական) գործառույթ: Որքան նորածնության ազդեցությունը տարածվում է սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի տարբեր ոլորտներում, այնքան մեծանում է հասարակության նորարարական ներուժը, համապատասխան ոլորտներում նորամուծությունների ներդրման և ընդունման պատրաստակամությունը: Նորածնությունը նպաստում է հասարակությանը, խմբերին, անհատներին՝ հարմարվելու գոյատևման փոփոխվող ներքին և արտաքին պայմաններին :

3. Հաղորդակցական գործառույթ: Հասարակության մեջ գործող նշանային բոլոր համակարգերը ծառայում են որպես մարդկանց միջև հաղորդակցման միջոց: Նորածնությունն այդ համակարգերից մեկն է: Նորածնության այս գործառույթի էությունն այն է, որ որոշ մարդկանցից մյուսներին են փոխանցվում նորածնության ստանդարտները, այսինքն՝ նորածն նշանակությամբ օժտված որոշակի մշակութային նմուշներ: Այս ստանդարտների հետ մեկտեղ, փոխանցվում են դրանցով պայմանավորված նորածնության արժեքները:

4. Սոցիալական տարբերակման և համահարթեցման գործառույթ: Նորածնությունը հասարակությունն ընդգրկում է ամբողջապես: Իսկ դա նշանակում է, որ այն չի կարելի համարել ո՛չ ընտրախավի, ո՛չ առանձին սոցիալական դասերի և շերտերի, ժողովրդագրական խմբերի և այլնի «սեփականություն»: Բոլորը, այսպես թե այնպես, մասնակցում են դրան՝ չնայած մասնակցության ձևերը և ակտիվության աստիճանը բնականաբար տարբեր են:

5. Սոցիալականացման գործառույթ: Նորածնությունը սոցիալական և մշակութային փորձին անհատի հարաբերման միջոցներից մեկն է: Մասնակցությունը նորածնությանը կապված է որոշակի սոցիալական նորմերի և արժեքների յուրացման հետ:

6. Հեղինակության գործառույթ: Նորածնությունն այս կամ այն երևույթների, արժեքների, մշակույթին նմուշների և այլնի հեղինակության բարձրացման կամ նվազեցման գործոններից է:

7. Հոգեֆիզիոլոգիական լիցքաթափման գործառույթ: Արդի պայմաններում այս գործառույթն առանձնահատուկ կարևորություն ունի: Ժամանակակից արդյունաբերական հասարակությունում մարդու նյարդային համակարգի և հոգեկան ներաշխարհի լարվածությունը չափազանց բարձր է: Նորածնությունը հոգեֆիզիոլոգիական լիցքաթափման կենսական պահանջմունքը բավարարող գործոններից մեկն է: Այս առումով նորածնության գործառութային ծանրաբեռնվածությունը շատ մեծ է:

Ռուս նշանավոր նկարիչ-մոդելավորող Վ. Զայցևը, ի պաշտպանություն նորածնության, գրել է. «Կարելի է քմահաճության և անկայունության համար անվերջ մեղադրել նորածնությանը: Կարելի է նույնիսկ փորձել կանգնեցնել դրա ընթացքը, «պահածոյացնել» այն: Սակայն դա առաջին հերթին չի՞ աղքատացնի մեզ: Մեր շուրջը տառացիորեն փոփոխվում է ամեն ինչ: Եվ այդ փոփոխ-

վող աշխարհում կարո՞ղ է անփոփոխ մնալ միայն մեր հագուստը: Ոչ մի հրաման, հրահանգ կամ ցուցում չեն կարող կասեցնել նորաձևության սրընթաց վազքը» (1, էջ 4): Նորաձևությունը բնութագրում է մարդու և առարկայական միջավայրի փոխհարաբերությունները: Այն ընդգրկում է մարդկային գործունեության տարատեսակ ոլորտներ՝ էականորեն ազդելով դրանց զարգացման վրա: Հագուստի դիզայնում նորաձևությունն արտացոլվում է նախագծվող արդյունքի արտաքին ձևում:

Նորաձևությունը ստեղծվել է XII-XIII դարերում, երբ հագուստի ձևավորման մեջ ի հայտ եկան այնպիսի տարրեր, որոնց օգտագործումը չի կարելի բացատրել անհրաժեշտությամբ կամ գեղագիտական ճաշակի զարգացմամբ (օրինակ՝ մինչև մեկ մետր բարձրությամբ գլխարկները):

«Նորաձևության գաղտնի լեզու» արտահայտությունը հանգիստ կարելի է փոխարինել «հագուստի կենդանի լեզու» արտահայտությամբ: Նորաձևության պատմությունը նույնքան հին է, որքան և հագուստի պատմությունը: Հագուստը կարևոր նախանշաններից է, որի օգնությամբ կարելի է պատկերացում կազմել յուրաքանչյուր դարաշրջանի սովորույթների, ավանդույթների և կենսակերպի մասին:

Գեղարվեստական արժեք ներկայացնող ժամանակակից հագուստի ստեղծման գործընթացում հսկայական նշանակություն ունի ոճը, որը կազմում է դիզայներական գործունեության հիմքը: Այն ձևավորում է մարդու գեղագիտական ճաշակը, թելադրում կերպարային լուծումներն ու ուրվագծային ձևերը, հաստատում արժեքային կողմնորոշիչները, որոշում հագուստի տարրերի և ձևերի բարոյական մաշվածության տեմպերը:

Ոճը տվյալ դարաշրջանին բնորոշ գեղարվեստական լեզու է, որի օգնությամբ արտահայտվում են մշակույթը, գեղեցկության մասին պատկերացումները, գեղարվեստական կերպարները, շրջապատող աշխարհի նկատմամբ վերաբերմունքը և այլն: Յուրաքանչյուր դարաշրջանի, յուրաքանչյուր ժողովրդի բնորոշ է իր գեղարվեստական ոճը (3, էջ 23): Ոճը գեղարվեստական հատկանիշների միասնությունն է (2, էջ 82): Ժամանակի ընթացքում ոճը ձեռք է բերել բազմաթիվ իմաստային երանգներ: Ներթափանցելով կենցաղ՝ այն ստացել է ինչպես արվեստի ցանկացած տեսակի, այնպես էլ՝ մարդու կյանքի տարբերակողների բնութագրական, տարբերակիչ հատկանիշների ընդհանրության նշանակություն (կյանքի ոճ, հագուստի ոճ և այլն) (4, էջ 35):

Հանդիսանալով գեղարվեստական գործընթացի կազմակերպման գործոն՝ ոճը դիզայներին կողմնորոշում է բազմակերպար գաղափարները միասնական, ամբողջական համակարգում վերամշակելու ուղղությամբ, որտեղ յուրաքանչյուր դետալ ենթարկվում է ընդհանուր կառուցվածքային գաղափարին:

Որպես ստեղծագործական գործընթացի կազմակերպման գործոն ոճն արտացոլում է դիզայների գեղարվեստական մտածողության տեսակը:

Հանդիսանալով հագուստի սոցիալական գործածության գործոն՝ ոճը դիզայներին կողմնորոշում է դեպի հասարակությունը, բացահայտում հագուստի հասարակայնորեն օգտակար հատկանիշների վերաբերյալ մարդու պատկերացումները:

Հագուստը, որպես «հասարակության կյանքի ոճի» արտացոլում, իրենից ներկայացնում է մարդու օգտապաշտական, գեղագիտական և մշակութային պահանջմունքների համակցություն: Այդ համակցությունը կարող է փոփոխվել՝ կախված մարդու աշխարհայացի փոփոխությունից, գիտության և տեխնիկայի նվաճումներից, տնտեսական քաղաքականության ձեռքբերումներից և այլ գործոններից:

Ոճը ձևավորում է գեղարվեստական կերպարների համակարգը, հանդիսատեսին տրամադրում որոշակի գեղարվեստական արժեքների ընկալմանը: Հաղորդակցության տեսակետից ոճը դիզայների և սպառողի միջև կապող օղակի դեր է կատարում: Նորաձևությունը ոճի ձևավորման խթանիչի գործառույթ է իրականացնում: Այն ժամանակակից մշակույթի մասնիկն է և, ի տարբերություն ոճի, ունի կարճաժամկետ բնույթ: Ոճն ու նորաձևությունը հագուստի՝ որպես դիզայնի արդյունքի ձևավորման համակարգում ունեն առանցքային դերակատարում: Հագուստը ձևավորվում է որոշակի միջավայրում: Դրա վրա ազդում են փոխկապակցված բազմաթիվ գործոններ, որոնք գործում են մարդ-հագուստ-միջավայր-դիզայներ համակարգում: Նախագծելով հագուստը՝ դիզայները հետազոտում է և՛ մարդուն, և՛ միջավայրը, ու համապատասխանաբար՝ կրում է նրանց ազդեցությունը: Դիզայների ստեղծած հագուստն իր հերթին կարող է ձևավորել միջավայր և սպառող: Ակնհայտ է նաև, որ միջավայրը (մշակույթը) արտացոլվում է հագուստի օգտագործման բնույթում, իսկ հագուստ-դիզայներ հակադարձ կապը ապահովում է ստեղծագործական գործընթացի զարգացման դիալեկտիկական բնույթը:

Հագուստի կերպարային լուծումը կախված է դրա ոճային ուղղությունից: Այն առավել, քան այլ իրերն ու առարկաները, ունակ է ազդել մարդկանց գեղագիտական դաստիարակության, գեղեցիկի վերաբերյալ նրանց պատկերացումների և ճաշակի ձևավորման վրա: Արտահայտիչ, կերպարային առումով ճիշտ լուծումներ պարունկակող հագուստը նպաստում է մարդու ներքին հարստության և անհատական արժանիքների բացահայտմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бердник Т. О., Неклюдова Т. П. Дизайн костюма – Ростов н/Д.: изд''Феникс'', 2000. 448 с.
3. Мищенко Р. В. Основы художественной графики костюма. М.: Изд.''Академия'', 2008. 176 с.
3. Сафина Л. А., Тухбатулина Л. М., Хамматова В. В. Дизайн костюма. Ростов на Дону: Феникс, 2006. – 390 с.
4. Рачицкая Е. И., Сидоренко В. И. Моделирование и художественное оформление одежды. – Ростов на Дону: Феникс, 2002. – 608 с.